ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2015թ. **N 29-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015թվականի մարտի 11-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին>> N 200-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունվարի 18-ի <<ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների 2013թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 3-Ա որոշման N1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1)<<Զարգացման ծրագրերի և վերլուծության>> բաժինը լրացնել նոր՝ <<գլխավոր մասնագետ>> տողով.

2)<<Զարգացման ծրագրերի և վերլուծության>> բաժնից հանել 4-րդ տողը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2015թ մարտի 13
ք. Կապան